ԱՆՏԵՂԻ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ

«Հայաստան» թերթի ապրիլի 2-ի համարում ՀԿԿ կենտկոմը հրապարակել է հայտարարություն, որով դեմ է արտահայտվում Երևանի քաղխորհրդի 1991 թ. մարտի 28-ի նստաշրջանի այն որոշմանը, համաձայն որի ապամոնտաժվելու է հայոց մայրաքաղաք Երևանի Հանրապետության հրապարակում գտնվող Լենինի արձանը:

Դեռևս երեսնական թվականներին, լինելով երիտասարդ ճարտարապետ, առնչվելով այդ հուշարձանի տեղադրման հարցին, գրավոր դիմել եմ վերադասին, առաջարկելով, որ այն տեղադրվի հրապարակի ոչ թե ներքին մասում, ուր այժմ գտնվում է, այլ վերևում (այժմյան շատրվանների տեղում): Իմ կարծիքով՝ այդտեղ արձանը կունենար բարձր, շահեկան դիրք, արևի լույսը նրան պայծառություն կտար, կլիներ ավելի տեսանելի: Չէ՞ որ մեր պատանի գլուխներն էին մտցրել, որ «Լենինը հայերիս միակ փրկարարն է», որ, ինչպես մեր կենտկոմի հայտարարության մեջ է ասվում, նա նաև մեր պետության հիմնադիրն է: Հիմա, երբ մասամբ մատչելի են դարձել խորհրդային պետության և կուսակցության փաստաթղթերի պահոցները, և ժողովուրդը ծանոթ է դրանց ու գիտի՝ ով ով է, ՀԿԿ կենտկոմի մեր հայրենակիցները պետք է որ կարողանան որոշակի տարբերակում մտցնել իրենց մոտեցումներում՝ անցյալի գործիչների, այդ թվում նաև Լենինի նկատմամբ:

Երբ սուլթան Համիդը կոտորեց մեծաթիվ հայերի, երբ երիտթուրքերը իրականացրին մեկուկես միլիոն արևմտահայերի եղեռնը, ապա Լենինը, Ստալինը և նրանց մերձավոր զինակիցները «հանուն հեղափոխության հաղթանակի», ըստ էության կործանման եզրին հասցրին հայ ժողովրդին՝ նրան զրկելով իր պատմական հողերից: Լենինյան սոցիալիստական հեղափոխությամբ աշխարհի և ոչ մի ժողովուրդ չստացավ այնպիսի կործանարար հարված, ինչպիսին ստացավ հայ ժողովուրդը:

Այժմ Հայաստանի կոմկուսի կենտկոմը գտնում է, որ հանրապետության խորհրդարանը վճռական խոսք պետք է ասի Լենինի արձանը անձեռնմխելի թողնելու մասին:

«Հայաստան» թերթի հաջորդ իսկ համարում (3. 04. 1991 թ.) խմբագրությունը տպագրել է «Զսպվածություն և կշռադատված մոտեցում» հոդվածը: Այն ըստ էության «հայտարարության» մեկնաբանությունն է: Հոդվածն ամբողջությամբ փորձ է հայ ընթերցողին ներշնչելու, որ Լենինի արձանի գոյությունը Հանրապետության հրապարակում հայության գոյության երաշխիքն է:

Մեր ժողովուրդը իր հինավուրց հողի վրա կանգնեցրեց Լենինի և Ստալինի՝ աշխարհում երևի թե չգերազանցված ամենահաջող արձանները: Կյանքը ցույց տվեց, որ մեր ամենաազնիվ նվիրվածությունը այդ մարդկանց՝ կոպեկի արժեք չունեցավ: Քսանական թվականների հայավնաս ռուս-թուրքական պայմանագրերը կնքողները համարձակություն չունեցան որևէ հայտարարությամբ խոստովանելու իրենց սխալները, մեղքերը: Արդ՝ ավելորդ չէ՞ շարունակել մեր անմիջական նախորդների շողոքորթելու քաղաքականությունը, այն ժամանակ, երբ մենք սկսել ենք մեր գործընթացը դեպի անկախություն:

Ժողովուրդը բռնել է իր ճիշտ ճանապարհը և հարկ չկա ապակողմնորոշել նրան:

Կարծում եմ, չպիտի շտապել արձանի թափուր պատվանդանը արվեստի նոր ստեղծագործությամբ պսակելու գործում: Այդ հռչակված պատվանդանը թող այնքան մնա թափուր, մինչև որ առայսօր անհնարին թվացողը երբևէ հնարավոր դառնա: Ճարտարապետական համալիրը կհանդուրժի արձանի բացակայությունը:

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ
ՀՀ վաստակավոր ճարտարապետ